

የግድግዳ
ግድግዳ
ግድግዳ

GIOVANNI DOZZINI

QUI
DOVEVO
STARE

ROMANZO

ՋՈՎԱՆԻ ԴՈՑԻՆԻ

ԿՅՈՍԻՆՆ
ՊՈՍԻ
ՄՆԱԿԻ

ՎԵՊ

Թարգմանությունն իտալերենից՝
Լուսինե Շուրույանի



ԵՐԵՎԱՆ
2023

ՀՏԴ 821.131.1-31 Դոցինի
ԳՄԴ 84(4Իս)-44
Դ 817

Դ 817 Դոցինի Ջ.
Այստեղ պիտի մնայի: Վեպ / Ջ. Դոցինի - եր.: Newmag, 2023.-160 էջ:

Լուկա Բրեգոլիսեն միջին տարիքի ներկարար է: Ապրում է Իտալիայի Պերուջա քաղաքում: Երիտասարդ տարիներին մասնակցել է հասարակական տարրեր շարժումների, կինո օնային տնտեսուհի է, դուստրը չորս տարեկան է, կոմունիստ հայրը թռչակատու է: Բրեգոլիսեն չարացած է ներգաղթյալների վրա, որոնք խաթարում են իր քաղաքի անդորրը: Նրա օգնական Նաբիլի անչափահաս որդին թմրավաճառ է: Մարոկկացի Նաբիլը կրած է բազում հոգսերի տակ: Եվ ահա մի օր Նաբիլի որդին անհետանում է: Բրեգոլիսեն այժմ պետք է վերջնական որոշում կայացնի:

«Այստեղ պիտի մնայի» վեպը տասնվեցօրյա ներքին մտորումների հոսք է: Այն գրված է առաջին դեմքով և ներկա ժամանակով, ինչն ընթերցողին հնարավորություն է տալիս աշխարհին նայել Բրեգոլիսեի աչքերով:

ՀՏԴ 821.131.1-31 Դոցինի
ԳՄԴ 84(4Իս)-44

ISBN 978-9939-967-13-4

Ջովանի Դոցինի «Այստեղ պիտի մնայի» © 2023, «Նյու Մեգ» ՍՊԸ
Copyright © Giovanni Dozzini 2021

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:



Co-funded by the
Creative Europe Programme
of the European Union

The book is published and co-funded by
the Creative Europe Programme of the European Union

Գիրքը հրատարակվել է եվրոպական
Միության «Ստեղծարար եվրոպա» ծրագրի
համաֆինանսավորմամբ:

The content of this book represents the views of the author only and is his/her sole responsibility. The European Commission and the Agency do not accept any responsibility for use that may be made of the information it contains.

Եվրահանձնաժողովը և Գործակալությունը որևէ պատասխանատվություն չեն կրում գրքում արտահայտված մտքերի համար:

Բովանդակություն

Երկուշաբթի	9
Երկուշաբթի	57
Երկուշաբթի	97
Երեքշաբթի	113
Չորեքշաբթի	125

*Իմ գանձադարան էլիզային,
հավերժ կոնունիսպ հորս*

Երկուշաբթի

Աջ կողմում գտնվող կամուրջն անցած՝ ցածր պատերի և դեպի Նաբիլենց խարխուլ տները տանող ծառուղու միջև՝ անուշեղենի խանութից ու Կազա դել Պոպոլոյից՝ այն կողմ, չորրորդ դասարանում, դեմքս փոստի գրասենյակի շենքին հառած, սպասում էի հորս: Այդ հին գրասենյակը դարձրել էին մսի խանութ, որը գյուղացիներն անվանում էին «մսի բուտիկ» ու հպարտանում, երբ պերուջացիները գալիս էին տասը եվրոյով երկու կտոր փափկամիս գնելու, ինչպես մինչև հիսունականների վերջերը գալիս էին Տիրեր գետում լողալու ու ջրում ամենավերջին հիմարի կամ պարզապես պերուջացիների կամ էլ քաղաքի մարդկանց պես խեղդվելու:

Լուսավորված պատուհաններ, մութ պատուհաններ. ժամը երկուսն է, գյուղը քնած է, լոյսերը մարած են, սուպերմարկետը խավարի մեջ է, իսկ ցուցանակը՝ կանաչ ու դեղին լոյսերով լուսավորված: Սուպերմարկետի անվանումը հարմար է կնոջս անվան հետ բառախաղ անելու համար. «Պամենյա, արի քեզ տանեմ «Պամ»», «Պամենյա, ամուսնացիր ինձ հետ. մեր գյուղում կա «Պամ» ու եկեղեցի, որտեղ մարդիկ մտնում էին առանց հրմշտոցի, առանց աչքերիս մեջ նայելու, մինչդեռ դագաղը լի էր իմ չափազանց երիտասարդ մոր մաշկածածկով ու «ժամկետանց մտով»: Մաշկ, միս, ոսկորներ ու վաղուց չքացած մազեր: Ներկայիս հանգուցյալների

* Կոմունիստական և սոցիալիստական կուսակցությունների հավաքատեղի (Թանոթագրությունը՝ **newmag**-ի):

գլխամաշկը դատարկ է՝ լինի տղամարդ թե կին. զագրելի չարիքի ու նույն այդ զագրելի բուժման արդյունք, որ մեզ այսօր այս վիճակին է հասցրել ու դեռ կհասցնի: Կազա դել Պուպոլոյում մի ցուրտ երեկո հայրս, ձեռքս բռնած ու գլխարկը ծնկներին դրած, ուշադիր լսում էր՝ քաջություն չունենալով հարցնել, թե երբ էր պետք ասել «այո՛» և երբ՝ «ո՛չ»: Իսկ ես, չնայած որ ամենաներհիտասարդն էի այդ սենյակում, ամեն ինչ արդեն հասկացել էի. Խորհրդային Միությանը փլուզվել էր, կոմունիզմը՝ նույնպես, և մեզ միայն մնացել էին Օքետոյի՝ սև աչքերը, ընչացքը, Օքետոյի կաղնին՝, Օքետոյի արցունքները: Հայրս ու ավտոմեքենաների վերանորոգման արհեստանոցի իր գործընկերն այնտեղ էին ու պատրաստվում էին քվեարկել հօգուտ մի սխալ առաջարկի, բայց, բարեբախտաբար, այնտեղ էի ես՝ մանչուկը՝ թալիսմանը: Դրա հաջորդ օրն այս մասին պիտի պատմեի ուսուցիչներիս, իսկ մաթեմատիկայի ուսուցիչս ինձ պիտի ծաղրեր, որովհետև Քրիստոնեադեմոկրատական միության անդամ էր: Եվ հիշում եմ՝ մի օր նրան ասացի, որ ինքս կոմունիստ եմ, բայց քրիստոնեադեմոկրատականի օրհորժակ ունեմ, ինչին էլ նա պատասխանեց, որ կատակս ամենևին էլ զվարճալի չէ, ու ծիծաղելու ոչինչ չկա: Կազա դել Պուպոլոյից բացի՝ գյուղը երկու մասի էր բաժանում՝ նաև Պրովինչալե փողոցը. տները մի կողմում էին, իսկ Տիրեր գետի շուրջ սփռված մշակված հողերը՝ մյուս կողմում: Ներկա պահին հանգած պատուհաններ էին և դասընկերների տներ, որոնք արդեն ունեն մեծ զավակներ ու նիհարած կանայք, իսկ Պամելային դեռևս չի հաջողվում ազատվել Կատերինայի լույս աշխարհ գալուց հետո մնացած հինգ կիլոգրամներից: Ու նրան ամեն մի հպում ինձ հիշեցնում է ժամանակին գոյություն չունեցող այդ յուրի շերտը, նաև իր լայնացած հեշտոցը և այն հորդացող արցունքները, երբ ասում էի, որ մի օր մեկ այլ կնոջ հետ պիտի փախչեի, որ ինքն այդ արարքի մեջ ոչ մի վատ բան չպետք է տեսներ: Ապագան սև էր, ապագան խաղի մեջ էր, և չէի ուզում ոչ մի ժնշում զգալ, *սերը շղթա է, և պետք է համակերպվել*, ասում էր նա այն շոգ երեկոներին, երբ մեքենայով իրեն տանում էի տուն և հետևից նույնիսկ չէի նայում, քանի որ գիտեի, որ մթության մեջ լաց էր լինում և պատրաստ

* Achille Occhetto - Աջիլե Օքետո (ծնվ. 1936թ.), Իտալական կոմունիստական կուսակցության վերջին գլխավոր քարտուղարը և Ճափ դեմոկրատական կուսակցության առաջին քարտուղարը:

** Ձախակողմյան դեմոկրատական կուսակցության խորհրդանիշը:

էր հազարերորդ անգամ մեղադրել, որ ես սպասվածի նման մեղմ, հասկացող ու փութկոտ չէի, որ այն տղամարդը չէի, որին կուզեր սիրահարվել, եթե «ում»-ը, «որտեղ»-ը և «երբ»-ը ընտրելու հնարավորություն լիներ: Ինձ անասելի կերպով հունից հանում էր: Բոլոր պատուհանները մթության մեջ են, ու չեմ կարծում, որ բաց պատուհաններ կան, դռները կողպված են, և խավարի մեջ հեծկլտում են անվտանգության տեսա-խցիկների կարմիր լույսերը: Գարունը դեռ լիովին չի եկել, և ապրիլյան այդ պաղ ու մութ երեկոներին մարդիկ դուրս չեն գալիս, եթե, իհարկե, շների կարիքները հոգալու պատրվակը չկա, ու դրսում դեգերում են միայն արարների զավակներն ու ռումինացիները, ժամանակ առ ժամանակ էլ՝ մոտոցիկլետով մի տղա ու սպիտակ ականջակալներով հատուկենտ սևամորթներ, որոնք պարզապես գնալու տեղ չունեին: Դռները կողպված են. ո՛չ տեսախցիկներն են բանի պետք, ո՛չ անվտանգության համակարգերը: Դրա վառ ապացույցն է այն փաստը, որ մեկ շաբաթ առաջ գիշերով մտել են Բուկոլինոյի, իսկ դրանից մեկ ամիս առաջ՝ Մարեշալոյի մոտ ու մագլցել էին գազի խողովակներով: Իմ տանն այժմ խողովակներն ու դրանց ամրակները թուլացված են, բայց դա էլ առանձնապես չի փրկում:

Տարրական դպրոցը կարմիր գույնի էր և շարունակում է կարմիր լինել՝ շագանակագույնին մոտ կարմիր, բայց ես կարմիր եմ ասում, դեռ մանկուց եմ ասել, որ կարմիր է, և երբևէ կասկածի տակ չեմ դրել, որ միշտ այստեղ եմ ապրելու՝ հորս ձեռքով, բազմաթիվ տանջանքների ու զոհաբերությունների գնով կառուցված այս տանը: Մի տուն, որը բավական ընդարձակ էր իմ ու քրոջս և մեր ընտանիքների համար, որոնք այնքան կուզեին միշտ այստեղ ապրել: Մայրս շուտ մահացավ, իսկ ես դեռ չէի դադարել մորս զավակը լինել, ինձ ժամանակ էր հարկավոր, ինձ մայր էր պետք, բայց երբ զագրելի ցավը վրա է հասնում, քեզ մնում է միայն նահանջել ու գլուխդ ձեռքերիդ մեջ առնել, կույզ գալ ու գիշերները լաց լինել, թողնել, որ կինդ քեզ գրկի, երբ ներկա է: Այդ ժամանակ մեր դուստրը դեռ չկար, իսկ Պամելան նոր էր եկել այն տուն, որը չէր ընտրել, մի տուն, որի գոյության մասին իր կյանքի մեծ մասի ընթացքում նույնիսկ գաղափար չէր ունեցել, բայց որը պիտի դառնար մի տուն, որտեղ միշտ պիտի ապրեր: Ու գիշերները նա ինձ գրկում էր ու չէր խոսում: Ես նրան երախտապարտ եմ այդ լռության համար: Դպրոցի լույսերը վառ են: Երբ երեխա էի, կարծում էի, որ աշակերտներն այդտեղ են ապրում՝ Լուսնան և

Այբերտինոն: Հետո երևում են Ջուլիանո Նարդոնիի, Մատեո Լիբերալիի տները, որտեղ տասնմեկ տարեկանում գնդակ խաղալիս մատս կոտրել էի, ու բժիշկը կպցրել էր: Միքելա Ջոնթետիի աղջկա տունը, որը տասնյոթ տարեկանում հղիացել էր ու հիմա ապրում է Աստված գիտի որտեղ ու Աստված գիտի ում հետ: Աղջիկը շատ գեղեցիկ էր. անհնար էր, որ իմը լիներ: Գիշերվա երկուսին քաղաքը քնած է, բայց որոշ երեխաներ հաստատ արթուն են, ու պատանիներից ոմանք, YouPorn-ի կամ Instagram-ի դիմաց նստած, ինքնաբավարարվում են: Կան նաև անքուն կանայք, նրանցից ոմանք սեքսով են զբաղվում. ապրիլյան թարմ եղանակին սեքսով զբաղվելն աշխարհի ամենագեղեցիկ բանն է, ինքնաբավարարումները՝ նույնպես: Քաղաքը խաղաղ քնած է, քանի որ բոլոր տներն ունեն ո՛չ բարձր, ո՛չ էլ ցածր դարպասներ, բայց բոլորս կցանկանայինք, որ դրանք բավական լինեն՝ սթափեցնելու այն բոլոր ռումինացիներին, որոնք սրբում տանում են բոլոր առանձնատները, ինչպես այն երկու ծերուկների տները՝ Բաստիայում, ու Կոսմիի՝ տունը՝ Բրուֆայում: Սերսե Կոսմի, այլն, այլն, ու միևնույն ժամանակ՝ մի շարք անհիմաստ տեսախցիկներ ու անվտանգային համակարգեր: Ու կարծում եմ, որ հիմա առանց դարպասի տներ այլևս չկան, նույնիսկ այն ալբանացիները, որոնք ապրում են Պրոնտիի դիմաց, ցանկապատ են քաշել: Գուցե միակը, որ դարպաս չունի, Կորինալդեզիի շենքն է՝ այդ ինքնասպանների ընտանիքի, որոնք վերջ էին տվել իրենց կյանքին՝ պարաններով ու հրացանները բերաններում բում-բում անելով: Պամելան քնել սիրում է, Կատերինան՝ նույնպես, բարեբախտաբար: Երբ փոքր էր, երբեք չէր քնում, ու Պամելան խելքը լրիվ թոցրել էր: Ես ասում էի. «Հանգիստ, Պամ-Պամելա, հանգիստ եղիր, վաղն առավոտյան մայրդ կգա, ու դու կկարողանաս գնալ «Պամ», գնումների ցուցափեղկերի մեջ քեզ նայել և ոչ մի լավ առաջարկ ու դեղին նշումով «Ջեդչ» պիտակի մեջ փաթաթած պանիրներ բաց չթողնես: Գնումներ անելը մի ամբողջ արվեստ է, ասում էր մայրս, ու չէի հասկանում, թե ինչ էր ուզում ասել, մինչև որ դու ինձ չբացատրեցիր, Պամելա, Պամի, իմ փոքրիկ թագուհի: Պամելան քնած է, Կատերինան քնած է, հայրս քնած է երկու սենյակ այն կողմ: Նա ոչ ոքի նեղություն չի տալիս, միայն երբեմն պատահմամբ սխալ շարժում է անում, բայց տանն իր ներկայությունն աննկատ է: Օգնում է, երբ պետք է, նույնիսկ մեր

* Sense Cosmi - Սերսե Կոսմի (ծնվ. 1958 թ.), ֆուտբոլի պերուցացի մարզիչ:

դստեր հետ գնում է խաղահրապարակ՝ հեծանիվ քշելու: Նույնիսկ եթե Պամելան այդքան էլ գոհ չէ, փաստը մնում է փաստ, որ սա, ճիշտ է, մեր բոլորի տունն է, բայց նախ և առաջ իր տունն է՝ զոհաբերությունների ու բազում զրկանքների գնով, իր ձեռքով կառուցած տունը, և այդքանից հետո չէր էլ կարող պատկերացնել, որ այդքան մեծ մահճակալի վրա իր ամբողջ ժամանակն առանց իր կնոջ կանցկացնի, առանց մորս, սկզբում՝ անմազ կին ու անմազ մայր, հետո՝ մահացած կին ու մահացած մայր՝ անշնչացած, տարրալուծված, պամ-պամ, բում-բում: Քույրս էլ է քնել սիրում, նաև ամուսինն ու զավակները՝ վերևի հարկում: Գիշերվա ժամը ճիշտ երկուսին ընտանիքը քնած է, երկուշաբթի օրերը գիշերները կամ քնում են, կամ շնորին են դուրս տանում՝ կարիքները հոգալու, կամ էլ քնում են մաքուր ու բուրավետ անկողիններում, մինչև դրանք հիվանդություններից կեղտոտվեն ու զարշահոտ դառնան, ինչպես մորս դեպքում էր, նաև քրոջս մոր ու հորս դեպքում, որն այս պահին քնած է: Մեր տանը շներ չկան: Գիշերը՝ ժամը երկուսին, երկուշաբթի օրով, նաև շաբաթվա այլ օրերին մարդիկ քնում են: Բանալին մտնում է տան դռան կողպեքի մեջ, քանի դեռ դարպասն ինքնիրեն փակվում է, Mini շարժիչը դեռևս տաք է, բանալին պատվում է, ու դուռը բացվում, և կարիք չկա լույսը վառելու, բացում են սառնարանի դուռը, հարձակվում թղթե տարայով կաթի վրա ու քաշում գլուխս: Տունը քնած է, քաղաքը քնած է, ընտանիքները քնած են, գողերը բարձրանում են թուլացած խողովակների վրայով, և երբ ամեն ինչ ըստ պլանի է ընթանում, նրանք վայր են ընկնում, ես հանում եմ կոշիկներս, գուլպաներս ու սողոսկում անկողին, որպեսզի հինգ ժամ քնեմ, որն ինձ բավարար է կատարածս աշխատանքի, ապրածս կյանքի ու քառասունամ-յա մի տղամարդու համար, որը, ինչպես պարզվում է, ես եմ:

Mini-ն շատ թանկ է նստում վրաս: Ավտոմեքենայի վրա ծախսվող գումարները տեղին են, քանի որ բոլորը նայում են, թե ինչ ավտոմեքենա ես վարում, ով է վարորդը, և պատկերացում կազմում, թե ինչ է նշանակում ինքդ քեզ թույլ տալ այս կամ այն ավտոմեքենան ունենալ: Peugeot-ն Պամելայի համար լավ է, համ էլ «Պ»-ով է սկսվում՝ Պամ-Պամելայի Peugeot-ն, և դա ինձ դուր է գալիս, ծայնն էլ եմ հավանում, իսկ Կատերինային իմ Mini-ն է դուր գալիս: Կատերինային ես մորից առավել եմ դուր գալիս, որովհետև նա իմ տիկնիկն է, և բոլոր աղջիկները սիրահարված են իրենց

հայրերին ու ցանկանում են ամուսնանալ նրանց հետ: Կատերինան բացառություն չէ, բայց Պամելան նրա նկատմամբ շատ նյարդային է: Չի կարելի չորս տարեկան երեխայի նկատմամբ այդքան նյարդային լինել, բայց երբ խոսում եմ նրա հետ այս մասին, չի լսում ու իր գործն է շարունակում. շորերն է դասավորում, սպասքն է տեղավորում, տունն է կարգի բերում ու ասում. «Թող արագ վերջացնեն գործս, քանի դեռ քնած է» կամ «Քանի մայրս երեխային այգուց դեռ տուն չի բերել»: Ու ոչ ոք գլխիցս հանել չի կարող այն փաստը, որ Պամելան ցանկանում էր երեխային մանկապարտեզ ուղարկել, հենց այդպես, այդքան շուտ, փոքրիկ հասակում. սկզբում երեխաներ ես ունենում, հետո առաջին հնարավորության դեպքում նրանցից ազատվում: Մայրս երբեք նման բան չէր անի ու չի արել քրոջս կամ ինձ հետ: Մենք ուրիշների նման մանկապարտեզներ չենք հաճախել: Մինչև տարրական դպրոց գնալը տանն ենք եղել, հետո մայրս գնաց՝ մեջքը ծռելու հիվանդանոցում. առավոտյան հինգից մինչև երեկոյան յոթը մաքրությանը էր զբաղվում: Լավ է՝ գոնե գիշերները չէր աշխատում, թե չէ ինչպես էր ընտանեկան հոգսերը հոգալու: Ընտանիքը գիշերները տանը քնած մոր կարիքն ունի, որը հիվանդ զավակների ձեռքն է բռնում, ճակատը շոյում ու հարկ եղած դեպքում մաքուր փոխնորդ շապիկներ պատրաստում՝ տաքությունից քրտնած շորերը փոխելու համար: Կատերինան նախաճաշից հետո ինձ գրկում է, այնուհետև պատուհանից ցտեսություն է քղավում, մինչ ես նստում եմ Doblo-ն, նայում հեռախոսիս, հետո դնում գրպանս, տեղից շարժվում եմ, որ գնամ Նաբիլի հետևից, ու Doblo-ն սլանում է դեպի Պրովինչալե, ու երբ մտնում եմ փողոց, դարպասի լույսը դեռ թարթում է: Մեկ րոպե ու քառասուն վայրկյանից Նաբիլի տան մոտ եմ: Նա ինձ սպասում է դրսում: Նաբիլի տունը քաղաքի ամենահին տներից է և գտնվում է քաղաքի ամենահին փողոցներից մեկում: Քաղաքի ամենահին տներն ու քաղաքի ամենահին մայթերը լի են սևամորթներով, ալբանացիներով ու իր պես մարոկկացիներով: Քանի որ Նաբիլի տունը, բնականաբար, մագլցելու համար նախատեսված ցանկապատ չունի, չկա նաև դարպաս, որ բացես, ոչ էլ բռնակ և, իհարկե, ոչ մի թարթող լույս: Նաբիլն ինձ խոժոժված բարևում է, նստատեղից վերցնում եմ քջջայինս ու հենում վահանակի վրա, նա նստում է ու նորից խոժոժվում, հարցնում եմ՝ ինչպես ես:

— Մնասի՞ն գնացել է, — ասում է նա ու ձեռքերը խաչում:

— Էլի, — ասում եմ ես ու գլուխս օրորում:

Գլուխս օրորում եմ ու ճամփա ընկնում, Նենոն է անցնում իր գրողի տարած սպորտային SUV-ով:

Որոշ ժամանակ Նարիլն ինձ հանգիստ է թողնում, ես էլ ատամների արանքից մրթմրթում եմ ու չեմ խոսում, որովհետև չգիտեմ՝ ինչ ասել, լուսացույցն էլ կարմիր է ցույց տալիս, ու քանի որ պիտի կանգ առնեմ, գլուխս թեքում եմ ու նայում Նարիլին, որն ավելի լուսկյաց է, քան երբևէ:

— Ո՛ր:

Նարիլը թոթվում է ուսերը, կապույտ սինթետիկ բաճկոնի օձիքը դիպչում է ականջներին ու այն սակավաթիվ ճերմակ մազերին, որոնք դուրս են գալիս Mapei գլխարկի տակից: Մեր առջևում միայն կարմիր լույս վառած լուսացույցն է, ուրվագծվող փողոցը և անտառի եզրերից պոկված ու ասֆալտի վրա գլորվող քարերը: Ու դրա պատճառով Կազալիա ժամանելուց առաջ միշտ անվաղողերը ծակելու վտանգ կա: Նարիլի քիթը նույնքան ծուռ է, որքան Կազալիայի փողոցները, ու վրայից շան հոտ է գալիս, որին ես արդեն ընտելացել եմ:

— Բա բջջայինը:

— Չի պատասխանում:

— Բայց միացրած է, - հարցնում եմ ես, ու նա էլ գլխով է անում:

— Այս անգամ էլ կվերադառնա:

Ու գրույցն ինձ համար ավարտված է:

Հինգ րոպե անց դուռը բացում է մի պառավ՝ հագին խալաթ, իսկ խալաթի տակից երևում են բրոյա ժանգագույն գուլպաները, ոտքերին ունի տձև հողաթափեր: Ուզում է հանդիմանել, որ ուշացել էինք, բայց տեսնելով անժպիտ դեմքս՝ փոշմանում է: Երբ բարևեցի, ժպտաց ու ուղեկցեց տուն դարպասը դռնակից բաժանող մոտ երկու մետր ճանապարհով, որը որձաքարերով էր պատված: Դռնակի վերևում տեղադրված հախճապակե մանկան հետ Տիրամայրը չարամտորեն զննում է մեզ: Տուն մտնելիս սովորական դարձած ազդրիս սուր ցավն եմ զգում ու մտածում. «Բարի օր, գրողի տարած շան ցավ: Որքան հասկանում եմ՝ դու էլ արթնացար»: Այս մասին մտածելիս աչքիս առաջ են գալիս նաև պառավի ազդրերը: Նա իր հավի քամակով, փխրուն ոսկորներով ու զառամյալ ազդրերով օրորվելով քայլում է. դրանք երևի ժամանակին ավելի գեղեցիկ են եղել, քան հիմա: Պառավն ինչ-որ բան է ասում մեկ այլ պառավի մասին, որն ապրում է նույն քաղաքում և որն իրեն իմ համարն է տվել ու երաշխավորել, որ

ամբողջական գիրքն այստեղ է՝

Bookmark 